

խօսութենէ, որով պատուականալ կեղծօք մի լրագրի էջերը կ'աղտոտեն, օգտակար յօդուածներ հրատարակելու արգելք կ'ընին. մի բարեկարգ դպրոց կ'վատահամարեն, որ այս տարի այլևայլ կրից իսկապէս շանթ դարձաւ. Եթէ ժողովուրդ գրգռել կուզեն, որպէս զի իրենց անյայտ նենգաւոր նպատակին հասնեն, այդ երազայոյս կարծիք է. վասն զի ժողովուրդէն մեծագոյն, բարեմիտ և բան ի բուն մասն հասու և ականատես եղաւ դպրոցիս յառաջադիմութեան և բարեկարգութեան. արդէն ըստ մերձաւորութեան գիտէ, որ այդպիսի անձանց ասկերասան ինքնահարգութեան մէջ մի բառ ճշմարիտ չ'կայ. արդէն գիտէ, որ այդպիսի անձինք իրենց տգիտութեամբ և խռովայոյզ բարուք ժանտախտ են ազգին. Ուրեմն և դոցա գրուածները, եթէ այսուհետև որչափ ևս գրուին, ոչինչ յարգ և արժանաւորութիւն չ'ունին, նոցա երևակայական շանթերը անզօր, աններգործելի և նետք տղայոց են. ուսումնարանն ազատ է այդ ստութիւններէ, և իրաւամբ իւր Հայկական լեզուի յառաջադիմութեամբ կ'պարծի այսօր իրրե միակ Հայ ուսումնարան Ռուսաստանի մէջ, և իւր Ա. Ե. հաստատութեան Սուրբ Հօր խնամակալութեամբ և դպրոցիս նախագահ սրբազանի աչալուրջ վերահասութեամբ իւր իսկական նպատակին համեմատ յառաջադիմութեան մէջ է. Թող ճշմարտութեան թշնամիները ինչ կուզեն գրեն, ինչ կուզեն բարբանջեն. Ես քաջ գիտեմ, որ ապառուժ չարանխանձ անձանց ճշմարտութիւնն ատելի է. ես գիտեմ որ, կրիւք հարրած մարդուն հաստատուն պատերը ծուռ, և բլշակնեալ աչաց լուսին խաւարած կ'երևին, ուստի զարմանք չ'է, որ այդպիսի մտաւոր կուրաց աչքին Եղիշէն Սաղմոս կարծուի, Խորենացին կտակարան *), Եւ ես ո՛չ թէ այնպիսի մի դաւաճան և խաբէական նախկի կարևորութիւն տալու համար զխաւորա-

պէս գրեցի այս յօդուածը, ոչ, այնպիսի սուտ և խարդախ գրուածները արհամարհանաց միայն են արժանի. այլ դպրոցիս հանգամանք իսկութեամբ ծանուցանելու համար, որն որ, Արգոյ խմբագիր, կ'ինչորեմ ի պատիւ ճշմարտութեան հրատարակել պատուական լրագրոյդ միջոցաւ.

Աղէփասնիչը Բաղդասարեանց

Ի 1871 - 19 Սեպտեմբերի,

Ի Շոշի:

ՄԱՅՐ ՈՐԴԵԿՈՐՈՅՍ Ի ԳԱՆՁԱԿ

Մազթաղ անուն այրի կ'ին,
 Է սա բնակիչ քաղաքիս.
 Կրտսեր որդին իւր կայտառ
 Գողտրիկ մարմնով ութամեայ,
 Լեռն յանուն յորջորջեր
 Այն ինչ մանկիկն այն զուարթ
 Ել ի խաղալ ընդ մանկտեաց,
 Էր տաներեքն այս ամոյ,
 Արևն ի մուտս խոնարհի.
 Հասակակիցք դառնան տուն,
 Լեռնն այն օր ի զրգուիլ,
 2' դառնայ դեռ ի գիրկ մօրն,
 Մայրն ի միտս իւր վարանի,
 Արդեօք զի՞ է զի այսօր,
 Գեռ ո՛չ դառնայ սա ի տուն.
 Վազըս առնու կասկածոս,
 Ըստ կանացի իւր բարուց,
 Գնայ ի տունս սրտատրոփ,
 Իւր ծանօթից՝ հարցանէ,
 Յետ ի բաղմաց լրսելոյն,
 Ջրացասականն պատասխան,
 Գտանէ ոչ զբաղձալին,
 Գառնայ ի տուն ձեռնունայն.
 Որդեկորոյս թշուառ մայրն
 Նախկին զիշերն ցառաւօտ,
 Տարակուսեալ տազնապաւ,
 Մուտ յանկողին բայց անբուն,
 Թէպէտ զիւրև քաղցրիկ քուն
 Տարածանէր քնքուշ թևս

(*) Թէ եւ Գպրոցիս մէջ Սաղմոս եւ կտակարան բրու ընթերցանութեան գիրք դաս չեն տրուիր, այց չգիտեմ թէ այդ պարունները Սաղմոսից եւ կրտակարանից ինչու կզգուին, որ մի անկրօնի վայելչ համոզմունք եւ գործ է:

Տալ խղճաւոյն նինջ հանգիստ
 Տեսանէր նա յերազի
 Զսիրելին իւր զաւակ,
 Ցանկայր զրկիլ համբուրիլ,
 Զարթնոյր ընդ ոտս՝ ցնորք էր.
 Եւ ի վաղուեան յերկորոզ օրն,
 Սիրտ ի բերան և բոկոտն,
 Աստանդ անկեալ որոնէր.
 Գոռայր գոչէր ո՛հ որդեակ,
 Շրջէր խնդրէր յողորմ՝ ձայն,
 Զոտիւք փարէր ամենից,
 Զիմն քաղցրիկ աղաւնեակ,
 Տեսի՞ք արդեօք հարցանէր.
 Ոչ որ չ'տայր պատասխան,
 Սրտաճմլիկ բանից մօրն,
 Լ'յո՛ տեսի յայս նիշտեղ,
 Զքո որդին զոր ինդրես,
 Ե յնքանեաց աչք կուրացան,
 Ոչ որ ետես զանմեղ գառն:
 Մայրն աղէխարչ լալազին
 Ցանկայր մտնել յորջ խաւար.
 Արիւնարբու հրէից տուն,
 Ի յորոնել անգանօր,
 Զիւր թանկագին զկորուստ,
 Ոչ որ չ'տայր թոյլ նըմա.
 Ի կատարել սրտին իղձ.
 Զանձն առաժուր արկանէր,
 Վե՛հ իշխողաց քաղաքիս,
 Աղաղակէր օգնեցէ՛ք,
 Որդեկորոյս խղճուկ մօրս,
 Որոնեցէ՛ք ըզհրէից,
 Գժոխանման աւեր տունս.
 Գիտեմ անշուշտ զի նորա,
 Զիմ՝ զգառնուկս գողացան,
 Առ ի ծրծել սուրբ զարիւն,
 Իմս անմեղ տատրակի,
 Արիւնախանձ այդ զազանք,
 Ըստ իւրեանց չար օրինաց,
 Ոչ որ չելից զիւրն փափագ,
 Այնուհետև խեղճ՝ այրին,
 Զէտ խելագար ի փողոցս,
 Աղաղակէր ո՛հ որդեակ.
 Որպէս առիւծ ձագամեռ.

Գոչմամբ ընու թաւ մայրիս
 Կամ եղջերու նետահար.
 Բառաչ ձայնիւն ահեղամբ
 Դղորդէ հիմանց ողջ մայրին:
 Սապէս խղճուկ չուականս
 Աղիողորմ՝ յողբ ի լաց,
 Գոռայր գոչէր որդեակ իմ.
 Ո՛հ որդեակ իմ՝ իմ որդեակ.
 Իմս աղու աղաւնեակ.
 Ո՛ր գիշակեր թռչուն չար,
 Արկ յիւր ճիրան անգլթաբար,
 Գողարիկ գառնուկ իմ սիրուն,
 Ո՛ր չար գազան շաղղակեր,
 Պատառոտեաց անխնայ.
 Ո՛ւր ես որդեակ իմ՝ քաղցրիկ.
 Ոչ մի յերկուց զոր ասեմ.
 Զքեզ որսաց և լափեաց.
 Այլ անագորոյն հըրէայք
 Մահ ետուն քեզ չալաչար.
 Աչք մթագնեալ սիրտն ի դող,
 Զունէր երբէք սա հանգիստ,
 Ցերեկն ի բուն սովալ լուկ,
 Եւ ցայն ամեն անհանգիստ,
 Կայր տագնապեալ երերուն:
 Մանուկն անմեղ յողորմ՝ ձայն
 Լայր և գոչէր ո՛վ մայր իմ,
 Ո՛ւր ես հաս ինձ յօգնութիւն.
 Անգութ անխիղճ հրէայք,
 Կըտրտեն զիս չարաչար:
 Առ աչք ելե՛ք մայր:
 Այս մայր իմ ա՛յս ե՛րբ դու ասա
 Ցաւս է սաստիկ, և խիստ սուր
 Անտանելի հասակիս,
 Զեռք անողորմ սիրտ անգու՛թ
 Արեամբ իմով շաղախեալ,
 Զի՛ք կարեկից սիրտ զթոտ,
 Այլ քանասար գայլք դժնեայք,
 Շրջապատեալ կան զինև,
 Սիրտ պատառեալ իմ արդէն,
 Լոյս իմ աչաց պակասի,
 Քաղնն ողիքս մինչ իսպառ
 Արև կենացս խաւարի,
 Զի մահ զիւր քօղ սևաթոյր

Արկ զանձամբ իմ՝ ահաւասիկ
 Փոքր մի ևս, այլ ոչ ևս՝
 Երբ ևիցէ զիմ՝ մարմին,
 Գացես նեխեալ որդնայից,
 Կական բարձեալ անմխիթար,
 Հեղ զարտասուսդ յիմ վերայ,
 Լուս՝ զմարմին իմ՝ այնու,
 Մի՛ տար զդին իմ՝ հողոյ,
 Այս իմ կտակ քեզ վերջինս
 Այլ զոր ասեմ լուր ինձ մայր,
 Կալ քեզ ֆանոն՝ Ղևտացին,
 Որ ի լիւրինն Եփրեմի,
 Կայր պանդխտեալ ուրանոր
 Այն ինչ գարձեալ Բէթղէմայ.
 Ի Գարաց եկն եմուտ
 Հարձ՝ Ղևտացւոյն ողջ զիշեր
 Տեղոյն յանխիղճ բնակչաց
 Բռնի կալեալ չարչարի,
 Երբ սեւթոյրն քօղն երարձ
 Չարարաստին յերեսաց,
 Գիշերն օգնօղ չար արանց
 Յերն իւր ընդ դուռն Ղևտացին
 Ետես առ սեամս տանն անկեալ
 Իւր սիրելի ամուսին
 Արի գոչէ երթիցօւք
 Ի յանիծեալ այս գեղջէ
 Չտայ պատասխան լծակցին,
 Չի լլկելոյն մեռեալ էր,
 Հան ի գրասո՞ զմեռեալն
 Յարեաւ չոգաւ յիւրն տեղին
 Բուռն հար զհարձէն առ զուր
 Ըստ ոսկերացն իւր վնա,
 Յերկոտասան մասն յօշեաց
 Չայնս առաքեաց յամենայն
 Իսրայէլի ցեղսն ի տես,
 Եսրայէլեանք բորբոքեան
 Վառեալ ի հուր վրիժու,
 Հարին ի սուր սուսերի
 Չբենիամեան ցեղն ողջոյն,
 Ապրեցաւ այր վեց հարիւր
 Բենիամինի ի ժառանգ,
 Իսկ մնացորդքն ամենայն,
 Ճարակ եղին երկաթոյն.

Յօշեա՛ մայր իմ՝ և դու զիմն,
 Ըստ ոսկերացս յօգուածոց,
 Բաժանեա զայնս սուրբ ազգաց,
 Իցէ՛ հօգին վրիժառու
 Չարթիցէ գէթ ի նոսա,
 Չվրէժս անուլ ի սոցունց,
 Եւ կամ՝ գոնեա՛ թող հասցէ,
 Չայն աղէտիս կայսեր յունկն,
 Գէթ նա առցէ զիմ՝ վրէժ,
 Արդեօք մնացե՞ն անտարբեր,
 Լսօղք անձիս սրտտոչոր,
 Եւ թողուցո՞ւն զոճրագործս
 Ապրիլ կենօք անպատիժ,
 Եւ կամ՝ կայսիւր սիրտ զթոտ
 Կարէ՞ ժուժել աղէտիցս,
 Արդարութեամբ ո՞չ ցասնու,
 Տալ զարժանին պատուհասս
 Հողին մանկանն զայստիկ,
 Ասաց պացաւ յիժերս կոյս,
 Եւ իստեցաւ ընդ հօգոց,
 Անմեղ մանկանց Բէթղէմի.
 Չվերտառեալս ամենայն,
 Տեսանէ այրն ի տեսլեան,
 Չարթնու ընդ ոստ սարսափեալ.
 Մնայ շուարեալ ցառաւօտ,
 Մինչ այլքն ամէն համբուրեն
 Ուրախութեամբ զարշարոյս.
 Սա չուռական մայր մանկանս
 Ել յանկողնոյն սգազգեաց,
 Էր մետասան օր կորստեան
 Ողորմելի հէգ մանկան,
 Մայրն անզգայ կայր ի տան.
 Յանկարծ շշուկ յունկն հաս,
 Թէ գտին զդի անմեղին,
 Նեխեալ հոռեալ որդնալից.
 Սրացաւ արտաք իբր արծիւ,
 Մանչելով զէտ առիւծ,
 Հաղիւ եհաս դուռն երկրորդ,
 Որ ելանէ ի փողոց.
 Ուշաթափեալ զլորեցաւ.
 Անշնչացեալ իբր մեռեալ,
 Մերձակայից օգնութեամբ,
 Ուշի ուշով յոտն եկաց.

Ուշաբերեալ խելաթափ.
 Վազէր զձէր հառաչմամբս
 Աչք յարտասուաց ցամաքեալ,
 Յրտատոջոր աղէկէզ,
 Երբեմն կացեալ երթ յոտին,
 Երբեմն անկեալ յափսիթերս,
 Եւ զալարէր օձանման.
 Փութայր հասնել յա՛ն ձկալին,
 Հազիւ հաս նա ուր ուրեմն,
 Առ տնէչալին յոր անձկայր,
 Ետես ամբոխ շուրջ պատեալ,
 Քաղաքապետն և բժիշկ.
 Կայեալ անդէն ի դնին,
 Եղջերուի պէս աղբեր ջրոյ,
 Յոյժ փափագէր տեսանել,
 Քաղցրիկ որդոյն զմարմին.
 Թէպէտ նեխեալ որդնալից.
 Լնուլ զտնէ իւր սրաին,
 Տալով մարմնոյն ջրո՛ւմ համբոյր,
 Ոչ ետուն թոյլ հպիւր յայն.
 Կարօտակէզ դարձ ի տուն,
 Լուացեալ անդէն զմարմին,
 Տարեալ եղին ի շիրմի.
 Մնաց անբոյժ վէրք ի սիրտ
 Մօր խղճալոյն հէզ այրւոյն,
 Ո՞ր սիրտ արդեօք քարեղէն,
 Լուեալ զաղէտս ոչ հեղցէ
 Տօղս արտասուաց յիւր սշաց,
 Չսպեալ զկիրս բարկութեան,
 Յո՞՞ճրագործաց չառնուլ վրէժ,
 Ո՞ր սիրտ արի ժուժեսցէ:

Գէորգ Բարձրոյ մանկանն:

Այր ոմն Ստեփան անուն գնեալ ամառ յառաջ զաղիւս ի պէտս շինութեան արտաքոյ քաղաքին ընդ մէջ արևելից և հիւսիսոյ է տեղին աղիւսագործութեանն, գնայ ի 23 ն ներկայ ամսոյս բերել զայնս առնու զճոտ մանկանն նեխոյ և որոնեալ գտանէ զգի նորին ի ներքոյ շինուածոյն ուր հուրն վառի ի թրծել զաղիւսն, առանց ձեռնամուխ լինելոյ իսկոյն երթայ առ քաղաքապետ և ծանուցանէ նմա զնմանէ, որոյ առեալ ընդ իւր զբժիշկ քաղաքիս գան ի գնին.

և գտանն զնա իրր խեղդեալ խոնձանաւն, զխոնձանն տարեալ եղին ի սուրն ի քննել զղիարդ պատահմանն տակաւին կայ անյայտ և անվախձան գործն, Բայց կարծիք հասարակութեան է անորոշ՝ ի Հրէից իցէ սպանեալ մանուկն՝ եթէ ի Տաճկաց. իսկ հասակ մանկանն դեռ նոր հասեալ ցաւարտ ութերորդ ամին՝ հաստատէ ըզկարծիս մեծագոյն մասին հասարակութեան թէ ի Հրէից իցէ մահ մանկանն, զի անկա՛ն ի կորուստ նորին յիրքտասաներորդ օր ամսոյս, որ է քեփուռ Հրէից և տօն քաւութեան և ծով մեծ. թողումք զճշմարիտն դատողութիւն բանիմաց մասինն ազգայնոց, խնդրելով միանգամայն զնշանակութիւն քեփուռ Հրէական բառին:

Յոսակէց ազգային սճ, Տ. Օ.

1871 -ի 27 -ն Սեպտեմբերի

Ի Գ.Ն.Մ.:

(Գողցես իրր աւանդութիւն կարծիք բազումք են զայսպիսի գործոց Հրէից, այլ արդարութեան իրաւունք ներին ոչ երբէք արկանել զյանցանան ի պարանոցս Հրէից մանաւանդ ի դէպ զալով Վեփուռի որ է տօնի քաւութեան նոցա յաւուր մահուան ողորմելի մանկան: Ուստի մնալ պարտիմք ցզիւտ ոճրագործին ջանիւք Նահանգ. դատարանին Գանձակայ, զոր անշուշտ հաղորդէ սոյն այս նամակագիրս ի գիտութիւն ազգայնոց:)

(Հեռեւեալը Արևանայ գեր. փոխ. — թեմակալին ուշադրութեան յանձնել պարտք կհամարիմք մեզ):

Խճառագրութեան Արարատ Ամսագրոյ:

Տգիտութեան պտուղն ինքն ըստ ինքեան դառն է, իսկ նորա հեռեւանքն դառնագոյն, բայց կլինի արդեօք այնպիսի միջոց, որ պանծալի գիտութեան ճաշակն, յարգն տարածուած տեսնելք բոլոր Հայ սերունդի մէջ, ազդարև տեսնում ենք ներկայ գալուսն մէջ գիտութեան պտղոյ ներքուստ ուարտա-